

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ՎԱՀԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՆԵՐԳՐՈՒՄ ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ

Նարեկացիագիտությունն ունի վաղեմի պատմություն: Տարբեր ժամանակներում մեծանուն ուսումնասիրողների կողմից քննվել են Գր. Նարեկացու տարբեր ստեղծագործությունները. շնորհիվ դրա կուտակվել է հսկայական գրականություն, կատարվել են բանասիրական, գրականագիտական քննություններ, տաղերի եւ գանձերի մի մասի աշխարհաբար փոխադրություններ: Սակայն այդքանը դեռեւս լիովին բավարար չէ՝ անմիջականորեն եւ խորությամբ ընկալելու եւ ըմբռնելու Նարեկացու տաղերի ու գանձերի բովանդակությունը: Նարեկացին շատ հաճախ կիրառել է խրթին ոճեր, բառեր եւ այնպիսի դարձվածքներ ու արտահայտություններ, որոնք երբեմն տառապում են անհասկանալիության հասնող կնճռոտ մանվածապատություններով: Կան բառեր էլ, որոնք միայն նրա կողմից են օգտագործվել¹: 2016 թ. հայտնի միջնադարագետ Հենրիկ Բախչինյանը հրատարակ բերեց իր հերթական մեծարժեք ուսումնասիրությունը՝ «Գրիգոր Նարեկացու Գանձարանը. վերծանություն եւ քննություն» վերնագրով, որը, ինչպես ինքը՝ հեղինակն է համեստորեն բնորոշել, «...փորձ է՝ թափանցելու Գրիգոր Նարեկացու հեղինակային Գանձարանը, որը բառի բուն իմաստով գանձարան է՝ լի հոգեւոր թաքնուած գանձերով...»²:

¹ Տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր. Տեքստի թարգմանությունը, ներածությունն ու ծանոթագրությունները՝ Արշավիր Մխիթարյանի, Երևան, 1957, էջ 29, 117:

² **Հ. Բախչինյան**, Գրիգոր Նարեկացու Գանձարանը. վերծանություն եւ քննություն, Լիբանան, 2016, էջ 10 (այսուհետ այս գրքից կատարված մյուս մեջբերումների հղումները կնշվեն շարադրանքում՝ ՀԲ համառոտագրությամբ):

Աշխատությունն ունի «Մոլտք», որտեղ գիտնականը հակիրճ ներկայացնում է Նարեկացու առանձին գանձերի ու տաղերի, նաև ժողովածուների տպագրման պատմությունը, հատկապես բարձր է գնահատում Գանձարան ժողովածուների լավագույն հետազոտող Արմինե Քյոչկերյանի աշխատասիրությունը 1981 թ. Երեւանում լույս տեսած գիտաքննական ժողովածուի առավելությունները, կատարում բանասիրական ճշգրտում՝ Նարեկացուն վերագրվող տաղերի ու գանձերի քանակի վերաբերյալ: Այնուհետև է. Բախչինյանը հիմնավորում է Նարեկացու տաղերի եւ գանձերի քննական վերծանությունն անհրաժեշտությունը՝ խոստովանելով, որ հատկապես տաղերի պարագայում դա չափազանց բարդ աշխատանք է, քանի որ, ինչպես եւ տարբեր ուսումնասիրողներից (Հր. Աճառյան, Մ. Աբեղյան, Ա. Ղազինյան) մեջբերված դիտարկումներն են փաստում, բանաստեղծը «երբեմն «մեղանչել է» լեզուական կանոնների դէմ՝ առաւել դժուար ընկալելի դարձնելով իր առանց այդ էլ բարդ լեզուն ու ոճը», օգտագործված շատ բառեր «ինքնահնար կամ անգործածական» են, հաճախ՝ անբացատրելի: Տաղերի ու գանձերի որոշ տողերի ու դրվագների դժվար ընկալելիությունը Բախչինյանը պատճառաբանում է նաև բանաստեղծի կիրառած այլաբանություններով, խորհրդանիշներով, աստվածաշնչյան անունների ու դրվագների հիշատակումներով եւ այլ պատճառներով (տե՛ս ՀԲ, 7-8): Չըջանցելով նախորդների կատարած աշխատանքի նշանակությունը Նարեկացու տաղերի եւ գանձերի աշխարհաբար տողացի փոխադրումների գործում՝ աշխատասիրության հեղինակը ընդհանուր առմամբ, սակայն, գտնում է, որ նման վերածումները, միեւնույն է, չեն ներկայացնում տաղերի «իմաստային խորքերը», եւ պատճառը ոչ միայն այն է, որ այդ տաղերը երբեմն ճիշտ չեն ընկալվել ու մեկնաբանվել, այլեւ այն, որ մի շարք տաղեր պարզապես ենթակա չեն տողացի աշխարհաբար վերածման:

Որպես նախօրինակ ունենալով Գեւորգ Աբգարյանի՝ Նարեկացու «ամենաիմաստուն», «ամենահռչակված տաղերից մեկի» (Գեւորգ Աբգարյանի բնորոշումներն են)՝ «Հարություն տաղի» քննական վերծանությունը³ Բախչինյանն իր այս գրքում արել է նույնը՝ Նարեկացու հայտնի բոլոր տաղերի եւ գանձերի համար: Նրա համար իր խոստովանությունը

³ Տե՛ս Գ. Աբգարյան, Վերծանություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», «Էջմիածին», 1974, Ա., էջ 42-48, Բ., էջ 39-48: Տաղում «սայլի» գաղափարական-այլաբանական իմաստի մասին բանասիրության մեջ տարբեր կարծիքները տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, աշխատասիրությամբ՝ Արմինե Քյոչկերյանի, Երեւան, 1981, էջ 253-254 (այսուհետ այս գրքից բերված մեջբերումների հղումների համար կնշվի ԱԲ եւ համապատասխան էջը):

այդ նախաձեռնությունների մեջ ուղենշային են եղել նաև Հակոբ Նալյանի եւ Գաբրիել Ավետիքյանի՝ Նարեկացու գանձերի մեկնությունները⁴:

Հ. Բախչինյանի այս նախաձեռնությունն ավելի քան կարեւոր է, որովհետեւ Նարեկացու գանձերի ու տաղերի վերծանողները տաղաչափական եւ պատկերավորման չափանիշները պահպանելու մղումից երբեմն բնագրի մոտավոր իմաստն են հաղորդել: Մինչդեռ գիտական խոսքի հիմքը պետք է լինի միայն բնագիրը եւ նրա անթերի ընկալումը:

Հ. Բախչինյանի աշխատությունն ընդգրկում է Նարեկացու հեղինակային Գանձարանը՝ ուսումնասիրողի վերակազմությունը եւ ժողովածուն բովանդակող գանձերի, տաղերի ու փոխերի բնագրերի ճշգրտմամբ⁵: Իր աշխատանքին մոտենալով բացառիկ խնամքով եւ աչալրջությամբ՝ բնագրերը ներկայացնելիս Հ. Բախչինյանը չի բավարարվել Նարեկացու գանձերի եւ տաղերի՝ Ա. Քյոչկերյանի կազմած գիտաքննական ժողովածուով. որքան էլ նա հիմնվել է այդ ժողովածուի վրա, այնուամենայնիվ կատարել է բնագրային որոշ փոփոխություններ եւ միջամտություններ՝ ըստ տվյալ հրատարակված գանձի կամ տաղի ձեռագրական տարբերակների կամ ըստ իմաստի (այստեղ հարկ չենք տեսնում բերել դա ապացուցող փաստերը): Կատարել է նաև բանասիրական ճշտումներ, որոնց մի մասը վերաբերում է Նարեկացուն վերագրվող առանձին տաղերի հեղինակային պատկանելության հարցերին: Իր այս եւ այլ կարգի նկատառումները Հ. Բախչինյանը տեղադրել է գրքի վերջում՝ «Բնագրային ծանուցումներ» բաժնում, որտեղ յուրաքանչյուր տաղի կամ գանձի վերաբերյալ, զուտ բնագրային ծանուցումներից բացի, հաճախ մատուցում է նաև բանասիրական նշանակության տարատեսակ տեղեկություններ, որոնք խիստ օգտակար եւ արժեքավոր կարող են լինել ուսումնասիրողների մեծ մասի իմացության համար: Այդ բաժնից կարելի է բերել ինչքան ասես օրինակներ, որոնք պերճախոս վկայությունն են այն բանի, թե Հ. Բախչինյանը որքան մտահոգ է իր ընթերցողների եւ բանասիրությամբ զբաղվողների խոր իմացությունների խնդրով: Սա խոսում է հեղինակի բարեխղճության եւ իր առջև դրված խնդրին անմասն նվիրված լինելու մասին:

⁴ Տե՛ս **Յ. Նալեան**, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1745. **Գ. Աւետիքեան**, Սրբոյ հօրն մերոյ Գրիգոր Նարեկացոյ երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827:

⁵ Նարեկացու Գանձատետրի գանձակազմերի հերթականության եւ ընդգրկման հեղինակային փոփոխությունների ու բնագրերի համար կիրառած սկզբունքների մասին տես ՀԲ, 341-342:

Գիրքն ունի ներածություն, որտեղ Հ. Բախչինյանը քննում է Նարեկացու ստեղծած գրական նոր ժանրերի ծագումնաբանությունը եւ Գանձարանի կազմավորումը:

Այստեղ հեղինակը նախ շատ հակիրճ ներկայացնում է մինչեւ Նարեկացին արդեն հինգհարյուրամյա պատմություն ունեցող հայ մատենագրությունը՝ իր ժանրային բազմազանությունը. առանձնակի կարեւորություն է տրվում եկեղեցական պաշտոնագրությունը եւ օրհներգությունը՝ կցուրդ-շարականի ժանրով⁶, այդ ասպարեզում հանդես եկած նշանավոր հեղինակներին՝ սկսած Սահակ Պարթևից ու Մեսրոպ Մաշտոցից: Այնուհետեւ վկայելով, որ կցուրդ-շարականը կամ օրհներգը Նարեկացուց շատ առաջ արդեն կայացած ժանր էր՝ Հ. Բախչինյանը փաստում է, որ Նարեկացու՝ որպես հանճարեղ բանաստեղծի ծննդի համար ի թիվս այլ նպաստավոր շատ գործոնների (երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի բարվոքությունը, ստացած կրթությունը, ուսուցիչների դերը եւ այլն) կար մատենագրական հաստատուն հիմք: Այս կերպ գիտնականը ցույց է տալիս, որ մեծ բանաստեղծի քնարերգությունը մեկուսի, չեզոք մի արժեք չէ. այն անմիջական կապ ունի ժամանակաշրջանի պատմական-հոգեբանական, հոգեւոր-գեղագիտական, դավանաբանական տիրապետող տրամադրությունների ու շահագրգռությունների հետ:

Պարզելով Նարեկացու ստեղծագործական կյանքի սկզբնավորումը եւ հետագա ընթացքը պայմանավորող հանգամանքները՝ Հ. Բախչինյանը մեծ կարեւորություն է տալիս նաեւ բանաստեղծի անհատականությանն ու ինքնատիպ խառնվածքին, ու թեեւ, ճիշտ է, գրականագետը առանձին չի անդրադառնում Նարեկացու կենսագրության, բնավորության ու ապրումների մանրամասներին, սակայն փաստում է, որ «Հանճարեղ բանաստեղծի համար, ըստ երեւոյթին, անձուկ են եղել շարականի կաղապարներն ու անմիջական կախուսածությունը եկեղեցական ծիսակարգից: Իր յախուռն ներաշխարհն ըստ ամենայնի դրսևորելու համար նրան անհրաժեշտ են եղել պարտադրուած ձեւաչափերից ու եկեղեցական արարողակարգից հնարաւորինս ազատ եւ անկախ ժանրեր: Եւ, ահա, նա ինքը ստեղծել է այդ ժանրերը՝ հիմք եւ ուղենիշ ունենալով հայ ժամա-

⁶ Ե. դարում մեզանում սկիզբ առած ինքնուրույն հոգետր երգերը՝ շարականները, կոչվել են նաեւ կցուրդ կամ կցորդ: Կցուրդները փոքրածավալ՝ 3-4 տնից բաղկացած պարագային սաղմոսատիպ երգեր էին, որոնք, լինելով Աստվածաշնչի տարբեր դրվագների եւ Քրիստոսի տնօրինությունների մատչելի վերաշարադրումը կամ մեկնությունը, հարասացությունների ձեռով կցվել են սաղմոսին կամ մարգարեկան օրհնությանը: Այդ մասին մանրամասնորեն տես Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին (5-14-րդ դարեր), Երեւան, 2012, էջ 11, 15-17:

կարգութիւն-ժամերգութիւնը եւ այն ընդգրկող ժամագիրք-Աղօթամատոյցը, որի մէջ ի սկզբանէ խորացած ու հմտացած է եղել» (ՀԲ, 14):

Ներկայացնելով ժամագրքային աղօթքի ժանրային առանձնահատկութիւնները՝ Հ. Բախչինյանը գտնում է, որ վերջինիս հիման վրա կամ հետեւությամբ Նարեկացին ստեղծել է բանաստեղծական աղօթքի ժանրը՝ աղոթական բանքը, եւ այդ տեսակի մեջ հորինել իր Աղօթամատոյցը, որի ժանրային պատկանելության հարցի վերաբերյալ բաղդատելով տարբեր նարեկացիագետներին (Մ. Աբեղյան, Ա. Ղազինյան, Հ. Միրզոյան, Հ. Թամրազյան) կարծիքներն ու օգտագործած եզրույթները՝ ինքը՝ գիտնականը, առանձնապէս հարկ չհամարելով մտնել բանավեճ հարուցող տարածայնութիւնների հորձանուտ, համարում է, թե Նարեկացու Մատյանը հիմնականում ունի ողբական տրամադրութիւն ու հնչեցնող եւ այն «կարելի է համարել ողբ-ողբերգութիւն (ողբասացութիւն իմաստով), եւ ընդունելի է նաեւ «Մատեան Ողբերգութեան» խորագրումը»: Եվ անմիջապէս բացատրում է. «Բայց ողբը սոսկ երկի բովանդակային բնութագրիչն է, ընդ որում՝ ոչ լիարժէք, քանի որ ողբից զատ Մատեանն ընդգրկում է նաեւ օրհնութիւն, ներբող, պարսաւ, խրատ, աղերս, ապաշաւանք եւ այլն» (ՀԲ, 17): Մինչդեռ ձեւային մակարդակում «Մատեան ողբերգութեան» երկը բանք է, աղօթական բանք՝ հիմնականում ողբական հնչերանգով...

Ներածութիւն հետագա շարադրանքում Հ. Բախչինյանը ներկայացնում է ժամագրքային քարոզի ժանրային եւ բովանդակային առանձնահատկութիւնները՝ դրանք ծանոթագրելով «Նոր հայկազեան բառարանից» ու տարբեր գիտնականների աշխատութիւններից մեջբերված քաղվածքներով, եւ բացատրում, որ Նարեկացին, իբրեւ նախօրինակ ունենալով հենց ժամագրքային քարոզը, ստեղծել է նոր՝ գանձի կամ բանաստեղծական քարոզի տեսակը: Իհարկէ, այս եւ քարոզների ու գանձերի աղբյուրների ու տարբերութիւնների եւ առհասարակ Գանձարանների ու գանձարանային միավորների մասին հարցերն արդեն արծարծվել են բանասիրութիւն մեջ, մասնավորապէս Ա. Քյոչկերյանի կողմից⁷, եւ նոր հետազոտողից պահանջվել է, ըստ էութեան, բացառապէս հաստատող գնահատական դրանց վերաբերյալ: Այստեղ հատուկ ուշադրութեան է արժանի Բախչինյանի անդրադարձը Բարսեղ Կեսարացու մի քարոզին: Ա. Քյոչկերյանն իր աշխատասիրութեամբ հրատարակած ժողովածուի

⁷ Տե՛ս ԱԲ, 9-51, ինչպէս նաեւ՝ **Ներսէս Շնորհալի**, Տաղեր եւ գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Քյոչկերյանի, Երեւան, 1987, էջ ԺԶ.-ԻԲ. **Ա. Քէօչկերեան**, Գանձարանային մշակույթ. սկզբնաւորում եւ զարգացում (Ժ.-ԺԳ. դարեր), Երեւան, 1957, էջ 5-46:

առաջաբանում արդեն կարեւորութիւն տվել էր այդ երկին, որ կրում է «Քարոզ Զատկաց» խորագիրը, եւ փաստել, որ այդ «ինքնատիպ» ստեղծագործութիւնն ունի նմանութիւն եւ՛ քարոզների, եւ՛ Նարեկացու գանձերի հետ, որը դարձյալ վկայում է դրանց փոխադարձ առնչութիւնների մասին: Համոզվելու համար, թե ինչ չափով է այդ երկը նման Նարեկացու գանձերին, նաեւ ժամագրքային քարոզներին, Քյոչկերյանը մեջ է բերել մի հատված «Քարոզ Զատկաց»-ի հայկական տարբերակից եւ ուսումնասիրողի ուշադրութիւնը դարձրել վերջիններիս կառուցվածքային էական հատկանիշներին (տե՛ս ԱՔ, 26-27): Մեջբերելով Քյոչկերյանի նկատառումները՝ Հ. Բախչինյանը կատարել է մի շարք համեմատական գուգահեռներ Կեսարացու հիշյալ քարոզի եւ Նարեկացու՝ Եկեղեցուն եւ Տապանակին նվիրված գանձի որոշ տողերի միջեւ եւ եկել այն կարծիքին կամ, ինչպէս ինքն է գրում փակագծերում, «եթէ ոչ համոզմանը», «որ Նարեկացին ինքն է յունարէնից թարգմանել (աւելի ճիշտ՝ ստեղծագործաբար փոխադրել) Բարսեղ Կեսարացու քարոզը» (ՀԲ, 22): Այս հանգամանքը շեշտում է ուսումնասիրողի քննական մոտեցումների ինքնատիպութիւնն ու ինքնուրույնութիւնը:

Անցնելով Գրիգոր Նարեկացու երգ-տաղերի ծագումնաբանութեանը՝ Հ. Բախչինյանը, հաստատապէս հարստացնելով ընթերցողների պատկերացումները հարցի կապակցութեամբ, փաստում է, որ դրանք ստեղծվել են Հայ եկեղեցու ժամասացութեան մեջ ընդգրկված թարգմանական եւ ինքնուրույն ժամերգերի հետեւութեամբ, հեղինակի կողմից անվանվել երգ եւ հետագայում միայն ուրիշներից կոչվել տաղ՝ «տարբերակելու համար ժամագրքային երգերից եւ առհասարակ բոլոր երգերից բնագրերից» (ՀԲ, 25): Եվ եթե հեղինակը հաճախ օգտվում է նախորդող ուսումնասիրողների գրականագիտական քննութիւններին, ապա այլոց գնահատականներն ու եզրահանգումները չեն միայն, որ դարձել են փաստարկներ Հ. Բախչինյանի համար: Իր հիմնավորումներում գրականագետը ելել է բուն նյութի խոր ու բազմակողմանի ուսումնասիրութիւնից, գիտական դիպուկ, բնորոշ բացահայտումներից:

Ներածութեան շարունակութեան մեջ Հ. Բախչինյանը գտնում է, որ Գ. Նարեկացին ունեցել է իր անհատական Գանձարանը՝ համակարգված գանձ-տաղ-փոխ՝⁸ միավորներից, որոնք ինքն առաջարկում է անվանել «գանձակազմ»՝ գանձարանային կանոնի կամ գանձ-շարքի փոխարեն: Ընթերցողի համար ամբողջական պատկերացում ձեւավորելու համար

⁸ Փոխ եզրույթի մասին տես ԱՔ, 33, 36. ՀԲ, 25-26:

բացատրում է, որ յուրաքանչյուր գանձակազմ բաղկացած է մեկ գանձից, մեկ կամ ավելի տաղից եւ մեկ անկախ փոխից: Եվ քանի որ գանձարանային համակարգը հանդես է գալիս եւ ծանոթ է նաեւ «գանձ-տաղ-փոխ-մեղեղի պատկերով»⁹, Բախչինյանը, առանց, սակայն, պատճառը ներկայացնելու, մեկնաբանում է, որ «Մեղեղի երգատեսակը յետագայ յաւելում է գանձակազմերում եւ յետագայ վերագրում Նարեկացու որոշ տաղերի եւ փոխերի» (ՀԲ, 27): Այնուհետեւ ուսումնասիրողը թերեւս առավել բացատրական նպատակով, ըստ Ա. Քյոչկերյանի պարզաբանումների, ներկայացնում է գանձերի եւ տաղերի էությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, նրանց միջեւ եղած ընդհանուրն ու տարբերությունները:

Նարեկացու հեղինակային Գանձարանը Բախչինյանի կողմից արժեւորվում է որպէս «մեր հանճարեղ բանաստեղծի ներաշխարհի մի ինքնօրինակ դրսեւորումը» եւ իր գեղարվեստական արժեքով հավասարվում «նրա անմահ Աղօթամատեանին...» (ՀԲ, 28): Մոտաբերելով տարբեր բանասերների գնահատանքի մտքերը մասնավորապէս Նարեկացու ստեղծագործության՝ հայ քնարերգուի աշխարհականացման գործում ունեցած հեղաշրջող նշանակության վերաբերմամբ՝ Բախչինյանը հավելում է. «...Հանճարեղ բանաստեղծն իր խօսքը հասցէագրեց շատ աւելի լայն լսարանի՝ թէ՛ երգուող եւ թէ՛ ընթերցող-արտասանող բանաստեղծական ասելիքի ձեւակերպմամբ: Նրա ստեղծագործութեան նպատակը եւս աւելին է, քան եկեղեցական արարողակարգին սպասարկելը. այն ունի, եկեղեցականից բացի, համաժողովրդական միտլածութիւն: Ուստիեւ, պատահական չէ, որ յատկապէս տաղերում բանաստեղծը երբեմն հետեւել է ժողովրդական բանահիւսութեանը եւ բառ ու բանին» (ՀԲ, 28-29):

Աշխատանքի ներածությունը հաջորդում է «Գանձարանի վերծանութիւնը» գլուխը, որը ծավալով ամենամեծն է, ինչը եւ բնական է: Այստեղ աշխատասիրողը, Նարեկացու գանձերն ու տաղերը դիտարկելով մեկ ամբողջություն կազմող ժողովածուի՝ Գանձարանի մեջ, որոշ չափով վերանայելով Ա. Քյոչկերյանի վերակազմած Գանձտետրը եւ նրա հրատարակած բնագրերը, նախ հատվածաբար՝ դրվագ առ դրվագ, ներկայացնում է համապատասխան գանձակազմի գանձը, ապա անջատաբար՝ նրան զուգակից հանդես եկող միավորները, եթե, իհարկե, ունի տվյալ գանձը: Յուրաքանչյուր, իր իսկ կողմից ճշգրտված բնագրային միավորին կից Բախչինյանը տալիս է դրա արեւելահայերեն արձակ վերծանությունը,

⁹ Տես Ա. Քեօշկերեան, Գանձարանային մշակոյթ. սկզբնաւորում եւ զարգացում, էջ 25:

իսկ հետո կատարում բովանդակային մեկնություններ ու ծանոթագրություններ:

Մեր համոզմամբ՝ հենց այսպիսին պետք է լինեն փոխադրությունները, որոնք ճիշտ են կատարում թե՛ իրենց գրական-բանասիրական դերը եւ թե՛ օգնում կարգացող-ուսումնասիրողին համեմատաբար հեշտ ընկալելու գանձերի բովանդակությունը: Նման գործը պահանջում է ոչ միայն եռանդուն եւ տքնաջան տեւական աշխատանք, այլեւ գրաբարի փայլուն իմացություն, այն էլ ժ. դարի գրաբարի, որն այսօր թերեւս մեզանում անմնացորդ կարող է հասկանալ լուկ մասնագետների մի նեղ խումբ:

Իսկ ինչ վերաբերում է գիտնականի՝ Նարեկացու բանաստեղծություններում «մարմնավոր իրերին», հոգեւոր խորհուրդներին եւ խորհրդանշաններին տված մեկնություններին, չի կարելի կարգալ եւ մի ջերմ գործվանք չապրել դրանց վարպետության առթիվ, առավել եւս, երբ գիտես, որ այդ ստեղծագործությունների ծանրակշիռ մասն առաջին անգամ է առնվում նմանօրինակ լուսաբանման: Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին իր տաղերում հոգեւոր բովանդակության արտահայտման այլաբանական եղանակին է դիմել «համարյա բացառապես այն դեպքերում, երբ աստվածաբանական խրթին ընդհանրացումներ է ցանկանում կատարել, կամ կրոնական հույզեր արտահայտել»¹⁰: Ուրեմն միայն պատկերացնել կարելի է, թե ինչ ջանք ու եռանդ, իմացություն է պահանջվել մեծավաստակ գիտնականից՝ իրականացնելու այսպիսի մի աշխատություն: Բնագրի հմուտ քննությունը Հ. Բախչինյանը հասել է Նարեկացու գանձերի, փոխերի ու տաղերի այլաբանական բովանդակության բացահայտմանը: Դրանց մանրախույզ ընթերցումը գրականագետին հնարավորություն է տվել՝ թափանցելու հանճարեղ բանաստեղծի գրական ժառանգության մի կարեւոր մասի բարդ եւ հետաքրքիր աշխարհը՝ ի հայտ բերելու բազմաթիվ ծածուկ շերտեր:

Հայտնի է նաեւ, որ Նարեկացին իր մտքերն ավելի տեսանելի դարձնելու, գործածած պատկերների ու համեմատությունների իմաստները բացահայտելու համար բազմիցս դիմում է Աստվածաշնչի օգնությանը, երբեմն նույնիսկ խոսում ու մտածում է այդ գրքի լեզվով, մի բան, որ անպայմանորեն պահանջ է դնում ոչ միայն մանրամասն ծանոթագրման, այլ նաեւ բացատրության, ինչը դարձյալ գերազանցորեն կատարել է Հ. Բախչինյանը: Այստեղ տեղին է հիշել Գեւորգ Աբգարյանի խոսքը. «Նրան (Գ. Նարեկացուն - Վ. Ա.) ճիշտ հասկանալ հնարավոր չէ առանց

¹⁰ Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երեւան, 1955, էջ 158:

ժամանակի եկեղեցական գրականությունը, հատկապես Աստվածաշունչը համեմատական աղբյուրագիտական խոր ուսումնասիրություն ենթարկելու»¹¹:

Ուսումնասիրություն հաջորդ՝ «Գանձարանի քննությունը» գլխում, Հ. Բախչինյանն իր կատարած վերծանությունների հիման վրա արդեն քննում է Նարեկացու Գանձարանի գաղափարական-գեղարվեստական արժեքը: Հենց սկզբից, անմիջապես՝ նախքան բուն նյութին անցնելը, գիտնականը նկատել է տալիս, որ Նարեկացու Գանձարանի առանցքը աստվածերգությունն է՝ եկեղեցական տոների թեմատիկ հենքի վրա (տե՛ս ՀԲ, 253): Այս միտքը, որ նույնությամբ երկրորդվում է գլխի ամփոփման սկզբում, հեղինակի կողմից չի տարրալուծվում: Սակայն, կարծում ենք, ճիշտ ենք ընկալել ուսումնասիրողի մտադրությունը. այն, որ Նարեկացու տաղերը, որքան էլ տեսանելի, իրական, կենդանի պատկերներ ունեն եւ առաջին հայացքից կարող են անգամ ընկալվել զուտ աշխարհիկ իմաստով, միեւնույն է, իրենց գլխավոր գործառությունը ունեցել են ծիսական-կիրառական նշանակություն. ուրեմն՝ դրանք պետք է նախ ըմբռնել ու արժեւորել բուն ծիսական գործառույթի առումով, դրանց հոգեւոր բովանդակության ու խորհուրդի բացահայտումից հետո նոր միայն, պայմանավորված տվյալ եկեղեցական տոնի էությունը, մեկնաբանել նրանց այլաբանական բովանդակությունը: Չէ՞ որ միայն նման մոտեցման դեպքում, առանց տաղն անջատելու Գանձարանից եւ իր կիրառական նշանակությունից, հնարավոր կլինի այն գնահատել որպես գանձարանային ստեղծագործություն եւ տեսնել կամ նկատել նրա հոգեւոր բովանդակությունը, մանավանդ այն տաղերի, որոնց հոգեւոր բովանդակությունը վերոնշյալ արտաքին տպավորության պատճառով կարող է ակնբախ չլինել:

Գանձի եւ տաղի՝ Նարեկացու հիմնադրած ժանրերի մեջ, ինչպես նշում է Հ. Բախչինյանը, հեղինակը կիրառել է իր համակարգած խորհրդաբանությունը, «որն ընկալելի է իբրեւ միստիկական սիմվոլիկա»՝ հիմնված «աստուածաշնչեան մեկնությունների եւ քրիստոնէացուած նորապատնականութեան «նշանական» աստվածաբանութեան եւ տիեզերաբանութեան», «այլեւ ազգային աշխարհագրագոյություններ վրայ» (ՀԲ, 253, 335):

Նարեկացին, քրիստոնեական հայտնի խորհրդանշաններից բացի, խորհրդանիշ է դարձրել նաեւ կյանքից ու բնությունից վերցրած նոր

¹¹ Գ. Արզարյան, Վերծանություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», «Էջմիածին», 1974, Բ., էջ 48:

առարկաներ ու երեւոյթներ եւ իր ստեղծած նորօրինակ հոգեւոր բանաստեղծութիւնը համալրել ինքնօրինակ այլաբանական պատկերներով: Սա ասում ենք, որպէսզի շատ թե քիչ հասկանալի դառնա, թե հոգեւոր խորհուրդների եւ խորհրդանշանների նարեկացիական համակարգի ուսումնասիրութեան, մեկնաբանութեան համար ինչ իմացութիւնն եւ ճանաչողութիւնն, ինչ ջանք ու եռանդ է պահանջուել Հ. Բախչինյանից: Գիտնականը հանգամանորեն մեկնաբանում, բացատրում է աստվածային էութեան տարբեր հատկանիշները բնութագրող մակերիւրերը, փոխաբերութիւններն ու խորհրդանշանները, որոնք առկա են Գանձարանում: Նա Նարեկացու խորհրդաբանութեան մեջ կարեւոր տեղ ունեցող յուրաքանչյուր խորհրդանիշ-այլաբերութիւն հայտնաբերում է տարբեր գանձերի ու տաղերի համատեքստերում, նաեւ բացատրում, թե որտեղի՛ց, ո՛ր կամ ո՛ւմ ստեղծագործութիւնից կարող է մակաբերված լինել այդ խորհրդանիշը, որը երբեմն մշակել կամ որին բանաստեղծը գուգորդել է որոշ այլաբերութիւններ, կամ որն է նրա բանաստեղծական երեւակայութեան ծնունդը:

«Գանձարանի քննութիւնը» գլխում ուշադրութեանից չի վրիպում այն, որ բանասերի վերլուծութիւնները կամ ծանոթագրութիւնները հաճախ ընդմիջվում կամ ավարտվում են ուշադրով եզրակացութիւններով, որոնց մի մասը, ճիշտ է, թեեւ արդեն արծարծվել է նարեկացիագիտութեան մեջ (ի դեպ, Հ. Բախչինյանը շատ հաճախ բուն շարադրանքում կամ տողատակի ծանոթագրութիւններում քաղվածքաբար մեջ է բերում տարբեր նարեկացիագետների կարծիքները, դրանք բաղդատում կամ հակադրում միմյանց, երբեմն էլ մեկը լրացնում մյուսով), եւ եթե անգամ մտածենք, որ Հ. Բախչինյանից առավել գուցե պահանջվել է հաստատող, ճշգրտող հայացք, ապա, միեւնոյն է, նա իր մտահանգումներին հասել է Նարեկացու աշխարհընկալման օբյեկտիվ իմաստավորմամբ, նրա տաղերի մանրախույզ ընթերցմամբ ու նրանց խորհրդաբանութեան ճշգրիտ ընկալմամբ: Այսպես, օրինակ, խոսելով Նարեկացու աստվածերգութեան մեջ Հոր եւ Որդու «միաբան-միասնական» սիրո մասին՝ մեջբերված բնագրային հատվածի փաստարկմամբ Հ. Բախչինյանը համոզիչ եղանակով գրում է, որ այդ «տողերը կարող են ընկալուել իբրեւ պարզ սիրերգութիւն: Անշուշտ, սա սիրերգութիւն է, սակայն՝ աստուածերգութեան ոլորտում, եւ, ըստ այդմ Նարեկացին հոգեւոր սիրերգութեան հիմնաստիւղն է հայ քրիստոսեան մէջ»: Ուրիշ բան, որ «Շատ յետոյ միայն, գրականութեան աշխարհիկացման շնորհիւ առաջ եկաւ «առն եւ կնոջ» սէրն արտայայ-

տող սիրեգուլթիւնը, որի ակունքներում է կանգնած Նարեկացու հոգեւոր սիրերգուլթիւնը...» (ՀԲ, 266),- մեկնաբանում է գիտնականը:

Նույնքան համոզվածութամբ Բախչինյանը գրում է նաեւ Նարեկացու ստեղծած բնության այլաբանական պատկերների մասին՝ փաստելով, որ աստվածերգության ոլորտում բանաստեղծի երկնած «բնութեան երգը» տակավին հոգեւոր-այլաբանական քողի տակ է (տե՛ս ՀԲ, 282):

Ինչ վերաբերում է Նարեկացու մարիամերգությանը, որտեղ բանաստեղծը, շարունակելով նախորդ օրհներգուներին (Մովսես Խորենացի, Ստեփանոս Սյունեցի, Սահակղուխտ) ավանդույթները, «իր ինքնօրինակ պատկերաւորման միջոցներով հրաշակերտել է Մարիամ Աստուածածնի կերպարը» (ՀԲ, 293), ապա Բախչինյանը, մասնավորապես նկատի ունենալով «Աչքն ծով՝ ի ծով ծիծաղախիտ» նշանավոր տաղը, իրավացիորեն որոշում է. «Այսրեղ միաժամանակ պարկերուած է երկնային ու երկրային էակը, Քրիստոսով լցուած, ոգեղէնացած ու գեղեցկացած մարդը՝ կանացի զմայլելի կերպարանքով: Սրանից յետոյ ընդամենը մեկ քայլ էր մնում մինչեւ լիովին երկրային կնոջ պարկերումը» (ՀԲ, 300): Խոստովանենք, որ բացատրությունը որեւէ երկմտության տեղիք չի տալիս:

Ուշագրավ է նաեւ, որ «Յարուլթեան» («Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց») արտագանձարանային տաղում, ինչպես նաեւ Գրիգոր Լուսավորչին նվիրված գանձում Բախչինյանը հայտնաբերում է Նարեկացու հայրենասիրական հույզերն ու տենչերը՝ այդ կապակցութամբ վկայաբերելով նաեւ նախորդ նարեկացիագետներից շատերի դիտարկումները (տե՛ս ՀԲ, 329-330):

Ահա այսպես խորն է Հենրիկ Բախչինյանը զգացել ու բավականին հանգամանալից վերլուծել Նարեկացու բանաստեղծական հորինումների գաղտնիքներն ու «ծածուկ» մտքերը, համակողմանիորեն բացահայտել նրա տաղերգության գրեթե բոլոր օրինաչափությունները, մեկնաբանել Գանձարանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երեւույթների միջեւ գոյություն ունեցող փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ ոչ միայն բնական շնորհք, այլև ստեղծագործական մեծ փորձ ու աշխատանքային եռանդ: Ահա հատկանիշների այս համաձուլվածքի շնորհիվ է ստեղծվել անվերապահորեն բարձրարժեք ստվարածավալ (376 էջ) այս ուսումնասիրությունը, որը հայ միջնադարյան եւ առհասարակ հայ գրականության մասնագետների համար միանգամայն անհրաժեշտ աշխատություն է՝ Նարեկացու հեղինակային Գանձարանի մասին հստակ պատկերացում կազմելու

Համար, մանավանդ եթե նկատի ենք ունենում Նարեկացու բոլոր հայտնի տաղերի եւ գանձերի արձակ արեւելահայերեն քննական վերածումներն ու բովանդակային մեկնությունները, որոնք նյութի ընդգրկման ծավալով եւ կատարման վարպետությամբ նախադեպը չունեն: Թերեւս հենց այսպիսի մի ուսումնասիրության մասին էր դեռ շատ տարիներ առաջ փափագում Գրիգոր Նարեկացու «Հարություն տաղի» քննական վերծանության հեղինակ Գեւորգ Աբգարյանը՝ գրելով. «Գրիգոր Նարեկացին այն մեծություններից է, որի ոչ մի միտք չպետք է անձանոթ մնա: Յուրաքանչյուր չվերծանված միտք՝ կորուստ է: Բանասիրությունն ու գրականագիտությունը մեծ գործ ունեն բանաստեղծի ստեղծագործության վերծանման բնագավառում: Բավականաչափ գնահատականների կողքին պակասում են մասնակի հետազոտությունները: Տեղին մեծարանքներն ավելի ամուր հիմքի վրա խարսխված կլինեն, եթե գրականագիտական ընդհանուր գնահատանքին զուգընթաց մանրամասն ուսումնասիրվեն տաղերում եւ «Ողբերգութեան մատեան»-ում մինչեւ օրս չվերծանված բազմաթիվ ու բազմաթիվ միավորներ, որոնց պետք է նվիրել առանձին ուսումնասիրություններ»¹²:

Վերջում միայն ասենք, որ Հ. Բախչինյանի գրքում գուցե հեղինակային որոշ ենթադրություններ հետագա ստուգման կարիք զգան, ինչոր դրույթներ էլ կարող են առարկության տեղիք տալ, որոնց մասին ակնարկում է նաեւ ինքը՝ հեղինակը, սակայն դրանք, մեր համոզմամբ, կարող են միայն մասնակի նշանակություն ունենալ, քանի որ մենք գործ ունենք միանգամայն գործնական, զուտ գիտական շարժառիթի եւ կատարման հետ:



¹² Անդ: